ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 12 հունվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Գյուլումյանի

Քննության առնելով Վարտգեզ Գասպարիի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմողը 24.12.2015թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ որոշելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի, 148-րդ հոդվածի 1-ին մասի, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 14.1, 18, 19, 33 և 43-րդ հոդվածների պահանջներին համապատասխանության հարցը (քանի որ դիմողը ՀՀ սահմանադրական դատարան իր

դիմումն ուղարկել է 21.12.2015թ., իսկ ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունների որոշ գլուխներ ուժի մեջ են մտել 22.12.2015թ., ուստի պետք է նկատի ունենալ 2015թ. ուժի մեջ մտած փոփոխությունների համապատասխան հոդվածները):

2. Դիմողը գտնում է, որ. «Սույն դիմումով վիճարկվող դրույթները, դատական պրակտիկայում դրանց տրված վերոգրյալ մեկնաբանությամբ, ուղղակիորեն հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին, այնպես էլ Սահմանադրական դատարանի 16.10.2012թ. թիվ ՍԴՈ-1052 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին առ այն, որ բողոքարկման ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից»:

3. Դիմումում ներկայացվել է միջնորդություն դիմողին պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

4. Դիմողի փաստարկների և գործի դատավարական նախապատմության վերլուծության հիման վրա դատական կազմը եզրահանգում է, որ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասը և 148-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ չեն կիրառվել, իսկ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ՀՀ սահմանադրական դատարանում կարող է վիճարկել միայն իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրա-կանությունը: Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ապա դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 31, 32, 39 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Վարտգեզ Գասպարիի անհատական դիմումը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասով և 148-րդ հոդվածի 1-ին մասի մասով մերժել:

2. «Վարտգեզ Գասպարիի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Առաջարկել սույն գործը միավորել ՀՀ սահմանադրական դատարանի վարույթում գտնվող՝ «Կարեն Հարությունյանի, Արտակ Գևորգյանի և Դավիթ Հարությունյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին, որի դատաքննությունը նշանակված է 2016թ. փետրվարի 9-ին:

4. Բավարարել Վարտգեզ Գասպարիին պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

5. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

12 հունվարի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-1